ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ

МЕРДЗАВАНСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք, Երևանյան
խճուղի 2-րդ փողոց 1,հեռախոս (0231)6-00-25
էլ.փոստgyuxmerdzavan@mail.ru

05.06.2012թ.

թիվ 89

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. Ս.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1]-րդ հոդվածի առաջին մասի, Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի 2012թվականի մայիս ամսվա ընդունած որոշումները:

Արձակած կարգադրություն չկա :

Առդիր 3/երեք/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ... Մուտք թիվ 5271-12 «07» 06 2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս (0231)6-00-25
էլ փոստ gyuxmerdzavan@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ
21մայիսի 2012թվականի N 11-Ն

ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2011թվականի նոյեմբերի 24-ի թիվ 13 հերթական նիստի <Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2012թվականի բյուջեն հաստատելու մասին> թիվ 07-Ն որոշումն,որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2011թվականի նոյեմբերի 24-ի թիվ 13 հերթական նիստի <Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2012թվականի բյուջեն հաստատելու մասին> թիվ 07-Ն որոշմամբ հաստատված բյուջեի նախահաշվում և ժամանակացույցում կատարել փոփոխություն՝ 01բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4214 հոդվածով /կապի ծառայություններ/ 4-րդ եռամսյակի համար նախատեսված գումարից 100000/հարյուր հազար/դրամը տեղափոխել 2-րդ եռամսյակ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012թվականի մայիսի 21
գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս (0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

18 մայիսի 2012թվականի N 10

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին , 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1328-Ն որոշմամբ, հաշվի առնելով,որ հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ սույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և հիմք ընդունելով քաղաքացի Գոհարիկ Վարդանի Մարգարյանի դիմումն,որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի Երիտասարդության փողոցի թիվ 108 հասցեում գտնվող՝ մինչև 15.05.2001թվականին կառուցված բնակելի տունը և դրա կառուցման և սպասարկման համար առկա սահմանազատված օրինական հողամասը 850,0քառակուսի մետր՝ համարել քաղաքացի Գոհարիկ Վարդանի Մարգարյանի սեփականությունը, որպես սեփական գույքի տիրապետողի :

2.Աշխատակազմի քարտուղարին՝ `սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով `15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան մարզային ստորաբաժանմանը ՝ գրանցելու Գոհարիկ Վարդանի Մարգարյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի ու բնակելի տան նկատմամբ և տրամադրելու անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012թվականի մայիսի 18

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնքի,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց 1
հեռախոս (0231)6-00-25,էլ. փոստ
gyuxmerdzavan@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

14 մայիսի 2012թվականի թիվ 09

ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով , Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում 2012թվականի մայիսի 14-ին կայացած աճուրդային կարգով հողի վաճառքի արդյունքներն,որոշում եմ՝.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում 2012թվականի մայիսի 14-ին կայացած 0,029հա բնակավայրի նշանակության այլ հողատեսքի աճուրդային կարգով վաճառքի արդյունքները:

2.0,029հա բնակավայրի նշանակության այլ հողատեսքի /լոտ 1, ծածկագիր 04-065-0061-0005/ աճուրդային վաճառքի արդյունքում հաղթող ճանաչված Վիրաբ Սանասարի Սաֆարյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012 թվականի մայիսի 15

գ. Մերձավան